ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 1-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

* * *

Նոյեմբերի 2-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում ելույթ է ունենում հանրածանոթ ասմունքող, ժողովրդական արտիստ Սուրեն Քոչարյանը:

Ցերեկույթին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում Եղիշե Չարենցի կյանքի և գրական գործունեության մասին բովանդակալից զեկուցում է կարդում մեծանուն բանաստեղծի դուստր գրականագետ Անահիտ Չարենցը:

* * *

Նոյեմբերի 3-ին, կիրակի.—Ը կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյեմբերի 9-ին, շաբաթ.—Այսօր, շուրջ մեկ ամիս Մայր Աթոռում գտնվելուց հետո, հրաժեշտ տալով Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռին, ԱՄՆ է մեկնում տ. Տիրան արքեպ. Ներսոյանը:

Երևանի օդանավակայանում սրբազան հորը ճանապարհում են Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, Սարգիս սրկ. Սարգսյանը և Արտաշես սրկ. Մուշեղյանը:

* * *

Նոյեմբերի 10-ին, կիրակի.—Թ կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին է այցելում Մոսկվայի հեռուստատեսության ռեժիսոր Ռոմանոս Չալթիքյանը:

* * *

Նոյեմբերի 14-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Նոյեմբերի 19-ին, երեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի Փարիզի փոխանորդ տ. Գյուտ եպս. Նագաշյանը:

Հանուն Հայոց Հայրապետի սրբազան հորը Երևանի օդանավակայանում դիմավորում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Մայր տաճարում իր աղոթքն անելուց հետո տ. Գյուտ եպիսկոպոսը Վեհարանում աջահամբույրով ստանում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին է այցելում հյուրաբար Երևանում գտնվող լիբանանահայ ծանոթ հասարակական գործիչ Փանոս Թիթիզյանը:

*
* *

Նոյեմբերի 25-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին Հայաստանում գտնվող Գերմանական Դեմոկրատական Հանրապետության պառլամենտական պատվիրակության անդամները՝ գլխավորությամբ ԳԴՀ-ի ժողովրդական պալատի նախագահ, ԳԴՀ-ի Պետական խորհրդի նախագահի տեղակալ Հերալդ Գյոտինգը:

Հայոց Հայրապետի և հարգարժան հյուրերի միջև տեղի ունեցավ սրտագին զրույց մի շարք հետաքրքիր հարցերի շուրջ:

*
* *

Նոյեմբերի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Բեյրութ է մեկնում տ. Գյուտ եպս. Նագաշյանը:

*
* *

Նոյեմբերի 30-ին, շաբաթ.—Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գուրգեն քհն. Աշուրյանը: